# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## «ՀԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-19/37» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան — «13» «սեպտեմբերի» 2019թ.
ժամը 11 $^{00}$

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) | Է. Դանիելյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | Ա. Հարությունյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | Ա. Մուրադյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Հ. Ավագյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Գ.Սիմոնյան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) | Վ.Պետրոսյան |

### 1. «ՀԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-19/37» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

---

(Է. Դանիելյան)

1.1. «ՀԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-19/37» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2019 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 11:00-ին, «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲԸ վարչական շենքում, ք.Երևան, օդանավակայան «Զվարթնոց»-2 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

### 2. «ՀԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-19/37» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՀԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-19/37» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2019 թվականի մայիսի 24-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «ԱՍԵԹՍ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

### 3. Հանձնաժողովը որոշեց՝

---

(Է. Դանիելյան)

3.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ 1-ին չափաբաժնով հաղթող ճանաչել «ԱՍԵԹՍ» ՓԲԸ-ին:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3.3. Անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագրի կնքման նպատակով «ՁԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-19/37» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներն՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

3.4. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

| | | |
|---|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) | | Է. Դանիելյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | | Ա. Հարությունյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | | Ա. Մուրադյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | | Հ. Ավագյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | | Գ.Սիմոնյան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) | | Վ.Պետրոսյան |